



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12**

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Բավական Գեվորգյանը, Հարութ Թերջյանը, Արթուր Հովհաննիսյանը, Գոռ Հունանյանը, Եպրաքսի Մալխասյանը, Մյասնիկ Պողոսյան ը, Սուրեն Սահակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորահին Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 65-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 31-ի արտահերթ նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 26.01.2024 թվականի N 09-Ն որոշմամբ հաստատված Ծաղկահովիտ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս հատկացում կատարելու մասին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.01.2024 ԹՎԱԿԱՆԻ N 09-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՋԵՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷՂԳԱՐ ՄՆՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի, «Նորմատիվային իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 14-ի 384-Լ որոշմամբ սահմանված բուսաբուծության աջակցության ծրագրի շրջանակներում Ծաղկահովիտ համայնքի շահառու հանդիսացող բնակիչներին և մոնիթորինգի հանձնաժողովին փոխհատուցման գումարներ հատկացնելու մասի համայնքի ղեկավարի առաջարկությունը, ինչպես նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի միջև 2024 թվականի հուլիսի 22-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների վերաբերյալ» N 312-24 և «Պետական աջակցության գումարի տրամադրման վերաբերյալ» N 313-24 պայմանագրերը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն և վերաբաշխում կատարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը հետևյալ բովանդակությամբ՝

- 1) Ծաղկահովիտ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում (Համայնքի բյուջեի վարչական մաս մուտքագրման ենթակա այլ եկամուտներ, բյուջետային դասակարգում 28-50-00) ավելացնել 110.801.841 (մեկ հարյուր տաս միլիոն ութ հարյուր մեկ հազար ութ հարյուր քառասունմեկ դրամ) ՀՀ դրամ եկամուտ,
- 2) Ծաղկահովիտ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի ծախսային մասում (Ծաղկահովիտ համայնքի գյուղատնտեսություն, բյուջետային դասակարգում 04-02-01-55, հոդված 4729 (այլ նպաստ բյուջեից)) ավելացնել 110.801.841 (մեկ հարյուր տաս միլիոն ութ հարյուր մեկ հազար ութ հարյուր քառասունմեկ դրամ) ՀՀ դրամ ծախս,

3) Թուլատրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին Ծաղկահովիտ համայնքի 2024 թվականի բյուջեի «Ծաղկահովիտ համայնքի գյուղատնտեսություն, բյուջետային դասակարգում 04-02-01-55» ծրագրի 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 107.574.603 (մեկ հարյուր յոթ միլիոն հինգ հարյուր յոթանասունչորս հազար վեց հարյուր երեք) ՀՀ դրամ գումարը փոխանցել համապատասխան շահառուներին և 3.227.238 (երեք միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար երկու հարյուր երեսունուրթ) ՀՀ դրամը ծրագրի մոնիթորինգի հանձնաժողովին:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՋԵԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԻ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՀԱՏԿԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, 90-րդ հոդվածի 4-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով սուբվենցիոն ծրագրով հաստատված Ծաղկահովիտ համայնքի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր և Բերքառատ բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցման համար 2024 թվականի հունիսի 27-ին «Սոլիդ-Քոնսթրաքշն» ՍՊԸ հետ կնքված ՀՀԱՄ-ԾՀ-ԲՄԱՇՁԲ-24/06 ծածկագրով պայմանագիրը և պայմանագրի շրջանակներում 2024 թվականի հուլիսի 24-ին կնքված թիվ 1 համաձայնագիրը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 38.909.600 /երեսունութ միլիոն իննը հարյուր իննը հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ հատկացնել բյուջեի ֆոնդային մաս՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ն/

Ավագանու անդամներ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲՈՅԱԶՅԱՆ

ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՐԱԶԻԿ ՄՀԵՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Նիստն արձանագրեց Արայիկ Ավետիսյանը

